ՄՐՑՈՒՅԹԻ ՏԵՍԱԿԸ : Առաջարկների հարցում

ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Checchi-ն առաջարկներ է փնտրում որակավորված տեղական ընկերություններից և/կամ կազմակերպություններից՝ ՀՀ արդարադատության նախարարությանը (ԱՆ) տեխնիկական աջակցության ծառայություններ տրամադրելու համար 2022-2026 թվականների Հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա Գործողությունների ծրագիրը (այսուհետ՝ Ռազմավարություն) մշակելու համար: ԱՆ աջակցություն է ակնկալում նոր ռազմավարության մշակման համար (ներառյալ գործողությունների ծրագիրը), պլանավորվող գործողությունների ծախսերի գնահատման, շահագրգիռ կողմերի հանդիպումների, և պետական կառույցների, հասարակական և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, ինչպես նաև այլ կազմակերպությունների /շահագրգիռ կողմերի հետ քննարկումների, նրանցից տեղեկատվության ստացման գործընթացը համակարգելու համար: հետ: Ծառայությունների մատակարարը նաև արագորեն կանցկացնի բոլոր առկա համապատասխան զեկույցների ստուգում (ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակով), փաստաթղթերի հետազոտություն՝ բոլոր շահագրգիռ կողմերից տեղեկատվություն հավաքելու և վերանայելու համար և ստացված տեղեկատվության վերլուծության և միջազգային լավագույն փորձի հիման վրա կմշակի Ռազմավարությունը և դրա գործողությունների ծրագիրը (գործողությունների ծրագրում նախատեսված գործողությունների ծախսերի նախահաշիվներով)՝ ըստ վարչապետի 30.12.2021թ 1508-Լ որոշմամբ նախատեսված պահանջների: Ծառայություն մատուցողը պետք է անմիջական աջակցություն ցուցաբերի վերոհիշյալ փաստաթղթերի մշակման և վերջնական տեսքի բերելու հարցում թափանցիկ և մասնակցային գործընթացի միջոցով:

Ընտրված ընկերությունը կամ կազմակերպությունը պետք է

փորձագիտական ծառայություններ մատուցի ԱՆ-ին նոր ռազմավարությունը մշակելիս՝ կատարելով հետևյալը.

Փուլ 1. Իրականացնել փաստաթղթերի վերանայում, որոնք կապված են 2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության և գործողությունների ծրագրի կարգավիճակի և իրականացման ընթացքի հետ.

- հավաքագրել և ուսումնասիրել առկա բոլոր զեկույցները և ոլորտային փաստաթղթերը (և ազգային և միջազգային մակարդակով)

- Կազմակերպել հանդիպումներ և քննարկումներ հիմնական շահագրգիռ պետական գերատեսչությունների (Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (ԿԿՀ), ԱՆ, Հակակոռուպցիոն կոմիտե և այլք), ինչպես նաև համապատասխան հասարակական կազմակերպությունների (ՔՀԿ-ներ, հիմնադրամներ, վերլուծական կենտրոններ և այլն) հետ:

- սահմանել ռազմավարության և գործողությունների ծրագրի իրականացման ընթացքում առաջացած կարիքները, ինչպես նաև հիմնական ռիսկերն ու մարտահրավերները

- ՏՀԶԿ-ի, GRECO-ի առաջարկությունների և այլ համապատասխան միջազգային
փաստաթղթերի կարիքների գնահատում և վերանայում, ինչպես նաև համապատասխան պարտավորությունների վերաբերյալ առաջարկությունների մշակում:

- Հավաքագրված տեղեկատվության հիման վրա մշակել նոր ռազմավարության վերաբերյալ առաջարկություններ և մշակել Ռազմավարությունը և դրա գործողությունների ծրագիրը ներառյալ նախատեսվող գործունեության ծախսերի նախահաշիվները՝ համաձայն

վարչապետի 30.12.2021թ. 1508-Լ որոշմամբ նախատեսված պահանջների:

Փուլ 2. Տրամադրել տեխնիկական աջակցություն ԱՆ-ին նոր ռազմավարության մշակման հարցում ներառյալ հետևյալը՝

- Շահագրգիռ անձանց հետ հանդիպման, կարիքների գնահատման և առկա տեղեկատվության վերանայման, ինչպես նաև ընթացիկ ռազմավարության իրականացման վերաբերյալ մշակված առաջարկությունների հիման վրա աջակցել ՀՀ արդարադատության նախարարությանը 2022-2026 թվականների հակակոռուպցիոն նոր ռազմավարության և գործողությունների ծրագրի մշակման գործում;

-Օգտագործելով առկա համապատասխան հարցումները (օրինակ՝ Կովկասյան հետազոտությունների և ռեսուրսների կենտրոնի, Թրանսփարենսի Ինթերնեշնլ-Հայաստանի և այլոց կողմից իրականացված) վերլուծել կոռուպցիայի ընկալումը առանցքային ոլորտներում՝ նպատակ ունենալով հավաքագրել և խմբավորել տվյալներն ըստ տարիքի, սեռի և այլ համապատասխան չափանիշների՝ ռազմավարության մեջ օգտագործելու համար.

-Աջակցել ԱՆ-ին ռազմավարության իրականացման համար առաջնահերթ, իրագործելի և իրատեսական գործողությունների ծրագրի մշակման գործում:

- Մշակել ծախսերի նախահաշիվներ և ռեսուրսներ, որոնք անհրաժեշտ են առաջարկվող գործողությունների ծրագրի իրականացման համար:

Փուլ 3. Աջակցել ԱՆ-ին՝ ապահովելու Ռազմավարության մշակման թափանցիկ և մասնակցային գործընթաց.

Ռազմավարության և գործողության ծրագրի մշակման համար կազմակերպել հանդիպումներ, աշխատանքային և ֆոկուս խմբային քննարկումներ շահագրգիռ կողմերի հետ:

- Ռազմավարության նախագծի կատարելագործման նպատակով շահագրգիռ կողմերից ստացված դիտարկումների հիման վրա ԱՆ-ին տրամադրել առաջարկություններ:

- Ապահովելու անհրաժեշտ բոլոր գործողությունները, որպեսզի ԱՆ-ն ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և 2022 – 2026 թթ. գործողությունների ծրագիրը ներկայացնի հանրային քննարկման Հայաստանի իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (e-draft) մինչև 2022 թվականի հուլիսի 10-ը:

- Ռազմավարության նախագիծը կներկայացվի հանրային քննարկման երկու շաբաթյա ժամանակահատվածով, որի ընթացքում հանրությունը, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները հնարավորություն կունենան ներկայացնել իրենց տեսակետները, առաջարկությունները, նկատառումները Ռազմավարության նախագծի վերաբերյալ: Այս ժամանակահատվածում ծառայություններ մատուցողը պետք է համակարգի և նախագծի վերաբերյալ հանրության կողմից հավաքագրված առաջարկություններն ու դիտարկումները ներկայացնի ԱՆ՝ քննարկելու նպատակով:

Արդյուքները.

ա) ՀՀ 2019-2022 թթ. հակակոռուպցիոն ռազմավարության և գործողությունների ծրագրի ընթացիկ կարգավիճակի, առաջընթացի և թերությունների վերաբերյալ հետազոտությունների վրա հիմնված վերլուծական զեկույց՝ նոր ռազմավարության և գործողությունների ծրագրի ներդրման վերաբերյալ առաջարկություններով.

բ) նոր Ռազմավարության և Գործողությունների ծրագրի վերաբերյալ շահագրգիռ կողմերի տվյալների հավաքագրման թափանցիկ և մասնակցային միջոցառումների իրականացման գործընթացի իրականացման ծրագրի նախագիծը՝ ժամանակացույցով և շահագրգիռ կողմերի շրջանակով:

գ) ՀՀ ԱՆ-ի հետ համատեղ մշակված 2022-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության և գործողությունների ծրագրի նախագիծը;

դ) Հանդիպումներ, սեմինարներ և թիրախային խմբեր համապատասխան շահագրգիռ կողմերի հետ Ռազմավարության նախագիծը և դրա գործողությունների պլանը ներկայացնելու, քննարկելու համար և հանրային քննարկումներից և

շահագրգիռ կողմերի նիստերից շահառուների տրամադրած տեղեկատվության և առաջարկությունների համախմբված հաշվետվություն, որը պատրաստվել և ներկայացվել է ԱՆ դրանք Ռազմավարության և Գործողությունների ծրագրի նախագծում ներառելու համար:

ե) 2022-2026թթ. Հակակոռուպցիոն ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը վերջնական տեսքով և պատրաստ ՀՀ ԱՆ կողմից ներկայացնելու ՀՀ կառավարության հաստատմանը:

Ծանոթագրություն հայտատուների համար:

Ընկերությունը/կազմակերպությունը պետք է առանձնացնի նշված առաջադրանքի իրականացման համար համապատասխան անձնակազմ:

Ստորև ներկայացվում է այն փորձագետների/մասնագետների ցանկը, ովքեր կարող են մասնակցել (հայտատուն կարող է առաջարկել իրենց կողմից նախանշված թիմի անդամների թեկնածությունը, որոնք ունեն համապատասխան պահանջվող կարողությունները):

- Հակակոռուպցիոն փորձագետներ (տեղական և միջազգային փորձագետներ), ովքեր ունեն նաև համապատասխան կարողությունները մշակելու արդյունքների, վերջնարդյունքի և կատարողականի ցուցանիշները,
- Սոցիալական հետազոտողներ/վերլուծաբաններ,
- Ֆինանսական ոլորտի (բյուջեի նախահաշվարկի) մասնագետներ
- Օրենսդրական նախագծման փորձագետներ:

Լրացուցիչ տեղեկություններ.

Արդարադատության նախարարության հետ համագործակցության մանրամասները և ձևաչափը կմշակվեն Հայաստանի բարեվարքություն ծրագրի հետ համագործակցությամբ և կորդինացմամբ:

Առաջարկողը պետք է տրամադրի համապատասխան ռեսուրսներով օժտված բյուջե՝ հանրային լսումներ, քննարկումներ, հանդիպումներ և կարիքների վրա հիմնված այլ համապատասխան միջոցառումներ կազմակերպելու համար:

Ռազմավարության առաջին նախագիծը, ներառյալ՝ գործողությունների ծրագիրը և ծախսերը պետք է ներկայացվեն ԱՆ մինչև 2022 թվականի հուլիսի 15-ը:

Տեխնիկական աջակցությունը իրենց համապատասխան ոլորտներում բարձր որակավորում ունեցող մասնագետների կողմից կտրամադրվի 2022 թվականի հունիսի 15-ից 2022 թվականի նոյեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում:

Մատակարարողները պետք է ունենան համապատասխան կարողությունը և ճկունությունը՝ տեխնիկական աջակցության ծառայությունները Հայաստանի բարեվարքության ծրագրի և ՀՀ արդարադատության նախարարության պահանջով համապատասխանեցնելու համար:

ՊԱՀԱՆՋՆԵՐ: Առաջարկների գնահատման չափանիշներ:

Ներկայացված առաջարկները կանցնեն նախնական վերանայում՝ բացառելու այն հայտերը, որոնք չեն համապատասխանում մրցույթի պահանջներին: Առաջարկների հետագա գնահատումը կիրականացվի ընտրող հանձնաժողովի կողմից

-Մեթոդաբանություն և տեխնիկական մոտեցում 20%,

- Կազմակերպության ներուժը և նախկին գործունեության ցուցանիշները - 20%,

-Ներգրավված անձնակազմի և փորձագետների որակավորում և փորձ- 40%;

-Ֆինանսական առաջարկ և ծախսերի ողջամտություն-20%

Պայմանագրի արժեքը.
Ընկերության կամ կազմակերպության կողմից ներկայացված առաջարկի ընդհանուր բյուջեն չպետք է գերազանցի 30,000,000,00 ՀՀ դրամը:

ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ: Ընկերությունները և/կամ կազմակերպությունները կարող են մինչև վերջնաժամկետը դիմել որպես առանձին կազմակերպություններ կամ կոնսորցիում/ համագործակցությամբ այլ կազմակերպությունների հետ:
Խնդրում ենք Ձեր նամակում հստակ նշել, որ այս աշխատանքի հնարավորության մասին տեղեկացել եք Կարիերայի կենտրոնի վեբ-կայքից և նշեք կայքի հղումը՝ www.careercenter.am: Շնորհակալություն:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

- http://cpcarmenia.am/hy/
-https://www.moj am/page/583
- http://www.irtek am/views/actaspx?aid=90411

ԿԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ.

RFP_MOJ AC Strategy.docx - Առաջարկի ձևանմուշ
Հավելված 4- Բյուջեի ձևանմուշ. xlsx - Հավելված 4-Բյուջեի ձևանմուշ